ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«30» դեկտեմբերի 2015 թ. N 276-Ա

2016 ԹՎԱԿԱՆԻ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև 2014 թվականի հոկտեմբերի 2-ին ստորագրված «Հատկացման պայմանավորվածությունները և ժամանակացույցը» թիվ ENPI/2013/024-483 ֆինանսավորման համաձայնագրի N 2 հավելվածի «Գ» աղյուսակի՝ «Տրանշների հատկացման հատուկ պայմաններ», 1.2-րդ կետը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 5-ի N 1516-Ն որոշման N 1 հավելվածի 12-րդ կետի դ) ենթակետով.

Հրամայում եմ՝

1. Հաստատել 2016 թվականի գյուղացիական տնտեսությունների ուսուցման տարեկան ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. <<Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերությունների տնօրեններին՝

1/ ապահովել սույն հրամանի 1-ին կետով հաստատված ծրագրի շրջանակներում դասընթացների արդյունավետ կազմակերպումը,

2/ յուրաքանչյուր եռամսյակ, մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 2-ը նախարարության աշխատակազմի գյուղատնտեսական ծրագրերի մոնիթորինգի և վերլուծության վարչություն ներկայացնել հաշվետվություն դասընթացների անցկացման ընթացքի վերաբերյալ:

3. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել նախարարի տեղակալ Ռ.Մակարյանին:

Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ